— Դրանք էլ մի տեսակ վաճառականներ են, — պատասխանեց նա. — դրանք էլ ունեն իրանց կրօնական մենավաճառութիւնները: Ազանազանութիւնը միայն վաճառքի նիւթի մէջն է: Եւ վաճառականը միշտ խաբեբայ է, միշտ խարդախ է, միշտ անիրաւ է: Իբրեւ օրինակ, ես կը խօսեմ միայն այս վանքի վանահայր Կարապետ վարդապետի վրայ: Դա առաջ տէր Յուսկան որդու վանքի վանահայրն էր, որն այս կողմերի աննշան եւ ոչ այնքան արդիւնաւոր վանքերից մէկն է: Նա մտածեց ձեռք ձգել սուրբ աստուածածնի վանքը, եւ ի՞նչ միջոցով. — խոստացաւ մի քուրդ իշխանի, թէ տարեկան արդիւնքի կէսը նրան կը տայ, միայն թէ նա օգնէ իրան վանահայր լինելու, եւ այսպիսով հասաւ իր նպատակին: Եւ դուք ձեր աչքով տեսաք, թէ որպէ՛ս քուրդ իշխանի գործակալները, մտած մեր տաճարի սրբարանի մէջ, հսկում էին գանձանակների վրայ: Հիմա հարցնում եմ, դուք մի պարզ նմանութիւն չէ՞ք տեսնում այս եկեղեցականի եւ կառավարութեան կապալառոի մէջ...:

Մեր խօսակցութիւնն ընդհատեց պառաւ կախարդի ձայնը, որն իր անրջային զառանցութեանց մէջ խօսում էր զանազան կցկտուր եւ մեզ անհասկանալի խօսքեր: Եւ զարմանալին այն է, որ նա խօսում էր խիստ մաքուր հայերէն լեզուով: Նրա խօսքերի մէջ ստեպ լսելի էր լինում անունս Հռիփսիմէ: «Ես կայրեմ ամրոցը... ասում էր նա. կը խորտակեմ նրա պարիսպները... իմ Հռիփսիմէն այնտեղ տխուր է... ես կ'ազատեմ նրան... մօտ է օրը... տագնապի մեծ օրը... արիւն, հուր եւ փոթորիկը կմաքրէ այս երկիրը... Հռիփսիմէ՛, շա՛տ տանջուեցար... ես կը սրբեմ քո արտասուքը»...

— Այս պառաւը միշտ խօսում է մի «ամրոցի» եւ այնտեղ պահուած մի «աղջկա» մասին, — ասացի ես Ասլանին:

— Դա նրա ցնորքն է... — պատասխանեց նա. — խելագարները շատ անգամ ունենում են մի երեւակայական ինքնագաղափար, որը մոռանալ կարող չեն...:

— Դա խօսում է հայերէն, եւ որքա՜ն լաւ է խօսում, ես առաջին անգամ լսում եմ դրա հայերէն խօսելը, — մէջ մտաւ Մարօն:

— Բոշաներն ամէն լեզուով խօսում են, — ասաց Ասլանը ժպտալով. — երեւի նա զգում է, որ Հայաստանումն է պառկած...:

— Բայց այս փոքրիկ վիուկը ինչո՞ւ լուռ է, — ասաց Մարօն, եւ խոնարհուելով՝ համբուրեց Հիւբբիի երեսը:

— Նա խելացի է... — պատասխանեց Ասլանը, ապա խօսքը փոխեց, — դուք աւելի լաւ կանէք, որ այժմ հեռանաք այստեղից. ահա մօտ է արեգակի ծագելը. թող ձեզ չտեսնեն այստեղ: